# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«26» [illegible] 2023 թվականի N 1600Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌԻՏԱ ՎԻԼԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ (30/48 ՄԱՍ), ԳԵՎՈՐԳ ԼՅՈՎԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ (9/48) ՄԱՍ, ՌԱՅԱ ՎԻԼԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ (6/48) ՄԱՍ, ՇՈՂՈԿԱԹ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (3/48) ՄԱՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N115 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 136.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 592.91 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Ռիտա Վիլիկի Հարությունյանին (30/48 մաս), Գևորգ Լյովայի Հարությունյանին (9/48 մաս), Ռայա Վիլիկի Հարությունյանին (6/48մաս), Շողոկաթ Գրիգորի Մանուկյանին (3/48մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցքի N115 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 136.23 (մեկ հարյուր երեսունվեց ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 592.91 (հինգ հարյուր իննսուներկու ամբողջ իննսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Գևորգ Լյովայի Հարությունյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով համաձայն կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Լյովայի Հարությունյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 09.08.2022թ. N14011 թվագրմամբ)՝ կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023Z67KPS ծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Ռիտա Վիլիկի Հարությունյանի (30/48 մաս) (ծնված 29.06.1955թ), Գևորգ Լյովայի Հարությունյանի (9/48 մաս) (ծնված 11.07.1979թ.), Ռայա Վիլիկի Հարությունյանի 6/48մաս (ծնված 17.12.1951թ), Շողոկաթ Գրիգորի Մանուկյանի (3/48մաս) (ծնված 02.01.1981թ), ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը իրենց պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցքի N115 հասցեի տան հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:

2. Քաղաքացիներ Ռիտա Վիլիկի Հարությունյանին (30/48 մաս), Գևորգ Լյովայի Հարությունյանին (9/48 մաս), Ռայա Վիլիկի Հարությունյանին (6/48մաս), Շողոկաթ Գրիգորի Մանուկյանին 3/48մաս ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցքի N115 hասցեի տանը կից սահմանված չափից ավել օգտագործվող 292.91 (երկու հարյուր իննսուներկու ամբողջ իննսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ ՝ Ռիտա Վիլիկի Հարությունյանին (30/48 մաս), Գևորգ Լյովայի Հարությունյանին (9/48 մաս), Ռայա Վիլիկի Հարությունյանին 6/48մաս, Շողոկաթ Գրիգորի Մանուկյանին (3/48մաս), տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 10514 (տաս հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 3079656 (երեք միլիոն յոթանասունինը հազար վեց հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 292.91 (երկու հարյուր իննսուներկու ամբողջ իննսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր ( պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Քաղաքացիներ Ռիտա Վիլիկի Հարությունյանին (30/48 մաս), Գևորգ Լյովայի Հարությունյանին (9/48) մաս, Ռայա Վիլիկի Հարությունյանին (6/48մաս), Շողոկաթ Գրիգորի Մանուկյանին (3/48մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցքի N115 hասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 136.23 (մեկ հարյուր երեսունվեց ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

5.Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2023 **թվականի** N 1599-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 05 -Ի N 1394-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք № 16/1 հասցեի 31.5 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 1394-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20/06/2023 թվականի N Կ-20062023-08-0129 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք № 16/1 հասցեի 31.5 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 1394-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Նախաբանում, որոշման 1-ին կետում «համատեղ » բառը փոխարինել «բաժնային» բառով :

23.06.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2023 թվականի N 1598-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԳԻԿԻ ՍՈԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N234/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 1121.04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (832.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հովհաննես Գագիկի Սոլոյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N16072014-08-0018) Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N234/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 1200.9 (հազար երկու հարյուր ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր արտաքին (909,5 (ինը հարյուր ինը ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց հասարակական շինություն:

Քաղաքացի Հովհաննես Գագիկի Սոլոյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023DS|2|| ծածկագիրը, քաղաքացի Հովհաննես Գագիկի Սոլոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N2918 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Հովհաննես Գագիկի Սոլոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N234/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 1200.9 (հազար երկու հարյուր ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր արտաքին (909,5 (ինը հարյուր ինը ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց հասարակական շինությունից 1121.04 (հազար հարյուր քսանմեկ ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (832.0 (ութ հարյուր երեսուներկու) քառակուսի մետր ներքին) մակերեսով հատվածը ճանաչել օրինական, տեղական տուրքի ենթակա է գանձման 8454884(ութ միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Աբովյան փողոց N234/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 1200.9 (հազար երկու հարյուր ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր արտաքին (909,5 (ինը հարյուր ինը ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց հասարակական շինության 4-րդ (չորրորդ) հարկի 79.86 (յոթանասունինը ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (73.5(յոթանասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հատվածը ենթակա է քանդման:
3. Նշված շինության 4-րդ (չորրորդ) հարկի 79.86 (յոթանասունինը ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (73.5(յոթանասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հատվածը քանդելուց հետո քաղաքացի Հովհաննես Գագիկի Սոլոյանին տրամադրել կիսակառույց շինությունն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու վերաբերյալ տվյալներով:
4. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

26.06.2023

X [signature]

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2023 թվականի N1597-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N933-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 20-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N121/1 հասցեի տանը կից ինքնակամ զբաղեցրած 96.21 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 2.67 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան պատը, 23.86 քառակուսի մետր արտաքին (22.18 քառակուսի մետր ներքին) մակերեսով օժանդակ շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին » N933-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 19/09/2019 թվականի N4-19092019-08-0042 որոշում);

Ներկայացվել է նոր ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 20-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N121/1 հասցեի տանը կից ինքնակամ զբաղեցրած 96.21 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 2.67 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան պատը, 23.86 քառակուսի մետր արտաքին (22.18 քառակուսի մետր ներքին) մակերեսով օժանդակ շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին » N933-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1)վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<2.67 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան պատը >> թիվը, բառերը և <<օժանդակ>> բառը հանել

2) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<96.21 (իննսունվեց ամբողջ քսանմեկ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<98.4(իննսունութ ամբողջ չորս տասնորդական)>> թվով և բառերով.

3) նախաբանի վերջում լրացնել <<ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023NYXXVS ծածկագիրը. >> բառերը և թվերը:

26.06.2023

X [signature]

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունիսի 2023 թվականի N 1596-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 1243-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17 -Ի N 970-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 17-ի <<Քաղաքացի Մարինե Լենգերի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 72 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 95,49 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 10,62քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 970-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08/06/2023 թվականի N Կ-08062023-08-0102 որոշում): Ներկայացվել է նոր ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 17-ի <<Քաղաքացի Մարինե Լենգերի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 72 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 95,49 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 10,62 քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 970-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<10,62 (տասն ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<5,3 (հինգ ամբողջ երեք տասնորդական)>> թվով և բառերով.

2) որոշումը լրացնել նոր $1.^{1}$ կետով հետևյալ բովանդակությամբ.

<<$1.^{1}$ Ճանաչել Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 72 և Կնունյանց փողոց N 74 հասցեների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ընդհանուր բակում գտնվող 5,32 (հինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավել օգտագործվող հողամասի նկատմամբ:>>.

3) նախաբանում <<չափագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023MMYEVS ծածկագիրը>> բառերը և թիվը.

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 17-ի N 970-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին>> 2023 թվականի մայիսի 18-ի N 1243-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«26» հունիսի 2023 թվականի N 1595 Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 03-Ի N 1099-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 03-ի <<Քաղաքացի Սամվել Ռոբերտի Մուրազյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մատրոսովի փողոց N 7 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 129,94 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1 դուռը, ինքնակամ փակված 1 դուռը օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 219,42 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1099-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 02/06/2023 թվականի N Կ-02062023-08-0130 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 03-ի <<Քաղաքացի Սամվել Ռոբերտի Մուրազյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մատրոսովի փողոց N 7 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 129,94 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1 դուռը, ինքնակամ փակված 1 դուռը օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 219,42 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1099-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<ինքնակամ փակված 1 դուռը>> թվից և բառերից հետո լրացնել <<ինքնակամ փակված 1(մեկ) պատուհանը>> թիվը և բառերը.

2) որոշման 2-րդ կետում <<4632 (չորս հազար վեց հարյուր երեսուներկու) >> թիվը և բառերը փոխարինել 6948 <<(վեց հազար ինը հարյուր քառասունութ)>> թվով և բառերով:

26.06.2023

X [signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունիսի 2023 **թվական** N 1594-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 91 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ջիվանու փողոց թիվ 91 հասցեի 26.42 (քսանվեց ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տունը փաստացի զբաղեցնում է 20.55 (քսան ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1089-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին N 51 որոշումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Գյումրի համայնքի Ջիվանու փողոց թիվ 91 հասցեի 26.42 (քսանվեց ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի ֆոնդի տան ու դրա փաստացի զբաղեցրած 41.11 (քառասունմեկ ամբողջ տասնմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասից 20.55 (քսան ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման, համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

**2023թիվ Գյումրի համայնք**

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» «հունիսի» 2023 թվական N 1593 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի հունիսի 22-ին ժամը՝ 12:35 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կատապետյանի (Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Կ. Խաչատրյան փողոց, տուն 3, անձնագիր՝ AU 0448071 տրված՝ 30.09.2021 թվականին 064-ի կողմից) բացակայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հունիսի 13-ին կազմած քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից Օրենսգրքի՝ 154–րդ հոդվածի 4–րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Ֆ. Հովհաննիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս՝ 2023 թվականի հունիսի 13–ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից Օրենսգրքի 154–րդ հոդվածի 4–րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն և դրան կցել թվով 2 լուսանկար:

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի 17.01.2023 թվականի գրության ուսումնասիրությունից պարզվել է, որ Գյումրի քաղաքի Կ.Խաչատրյան փողոցի թիվ 3 տան բնակիչներ՝ Բ.Կարապետյան և Ռ. Կարապետյանը 2002 թվականին ամուսնալուծվել են, որից հետո 2003 թվականին ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված թիվ 03-1001 վճռով նշված տունը բաժանվել է երկու մասի: Նշված վճիռը ի կատար է ածվել ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից: Ռ.Կարապետյանը 2007 թվականի հունվար ամսին շարել է իր մասնաբաժնի համար Կ.Խաչատրյան փողոցի կողմից բացված մուտքի դուռը և սկսել է օգտվել Բ.Կարապետյանին պատկանող բնակմակերեսի մուտքի դռնից: 14.07..2017 թվականին ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից ի կատար է ածվել ՀՀ ՇՄ ընդհանուր իրավասության դատարանի 01.12.2008 թվականին տրված թիվ 07-3943/02/08 և 04/02/09 թվականին տրված թիվ ՇԴ1289/02/08 կատարողական թերթի պահանջները, այսինքն՝ ք.Գյումրի Կ.Խաչատրյան փողոց թիվ 3 հասցեի տան սենյակներն իրար միացնող հատվածում պատ է շարվել և դուռ է դրվել:

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի 14.02.2022 թվականի թիվ 68/4-1188 գրության համաձայն ք.Գյումրի Կ.Խաչատրյան փողոց, թիվ 3 հասցեում քաղաքացի Ռ.Կարապետյանի կողմից իրականացվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ:

Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 24.03.2022 թվականի «Վարչական իրավախախտման գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու, ինքնակամ շինարարության հետևանքների վերացումը պարտավորեցնելու մասին» N Վ/Տ 192 Դ/Ա-Ա որոշման համաձայն, քաղաքացի՝ Ռիտա Կարապետյանի վարույթը տույժի մասով կարճվել է , սակայն պարտավորեցվել է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ինքնակամ շինարարության հետևանքների վերացումը:

Քանի որ որոշմամբ սահմանված ժամկետում Ռ.Կարապետյանի կողմից իրականացված ինքնակամ շինարարության հետևանքները չեն վերացվել , 23.09.2022 թվականին Գյումրու համայնքապետարանի համապատասխան բաժինների աշխատակիցների կողմից ք.Գյումրի Կ.Խաչատրյան փողոց, թիվ 3 հասցեում Ռ.Կարապետյանի կողմից դռան փոխարեն տեղադրված պատուհանը կրկին փոխարինվել է դռով, ինչպես նաև շարվել է միջսենյակային պատը:

2023 թվականին տեղում բացահայտվել և արձանագրվել է, որ քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանը, Գյումրի քաղաքի Կ.Խաչատրյան փողոցի թիվ 3 հասցեում, որը սեփականության իրավունքով պատկանում է իր ամուսնուն Բ.Կարապետյանին, չունենալով համապատասխան շինարարական թույլտվություն, ինքնակամ շինարարական աշխատանքներ է իրականացրել, այսինքն կատարել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի մարտի 03-ին կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 495-Ա որոշումը, որի համաձայն քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության, նշանակվել է տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որոշմն որոշում եմ մասի 2-րդ կետով պարտավորեցվել է

քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում, իր միջոցների հաշվին վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

2023 թվականի հունիսի 13-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից Գյումրի քաղաքի, Կ.Խաչատրյան փողոցի թիվ 3 հասցեում վարչական տույժ նշանակելուց հետո, առանց համապատասխան շինարարական թույլտվության իրականացնում է շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ նորից դուռը վերածել է պատուհանի և շինության ներսում շարված պատը քանդելով տեղադրել է դուռ, այսինքն՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով:

Քաղաքացի Ռիտա Սերյոժայի Կարապետյանը արձանագրության մեջ կատարել է գրառում՝ մեջբերում եմ.«Վերոնշյալ հարցով դիմել ենք դատարան, հայտարարում եմ՝ ոչ մի անօրինական գործողություն չեմ կատարել»:

Քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հունիսի 13-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված փաստաթղթերով, որտեղ հստակ երևում է, որ Գյումրի քաղաքի Կ.Խաչատրյան 3 հասցեում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել է վարչական իրավախախտում, իրավախախտում կատարելու փաստը հավաստվում է նաև՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Կումայրիի բաժնի կողմից ուղարկված գրությամբ:

Քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանը հարուցված վարչական վարույթի լսումների տեղի, օրվա և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, գործի նյութերում առկա է փոստային ծառայության միջոցով պատշաճ ծանուցումը հավաստող թիվ AL 0109919428 AM անդորրագրեր:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

1) հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին.

2) մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից.

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների

շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154–րդ հոդվածի 4–րդ մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 34–րդ հոդվածի 1–ին և 2-րդ մասերի, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 154–րդ հոդվածի 4-րդ մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով՝ 2000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել՝ քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանին սույն որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում իր միջոցների հաշվին վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները, շինությունը բերելով նախկին տեսքին:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարութան հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» «[illegible]» 2023 թվական N 1592 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219¹ հոդվածով, 2023 թվականի հունիսի 22-ին, ժամը 11:15-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանի (Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հովսեփյան փողոց 231/347, անձնագիր՝ AU 212407 տրված՝ 26.03.2021 թվականին 016-ի կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հունիսի 07-ին կազմված՝ քաղաքացի Արտուշ Սուրենի Համբարձումյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ Ա. Մովսիսյանը և Ֆ. Հովհաննիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի հունիսի 07-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և

255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել են քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանի կողմից Օրենսգրքի 154–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի հունիսի 07–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանի կողմից, Գյումրի քաղաքի, Հովսեփյան փողոցի թիվ 117 հասցեում, էլեկտրական ենթակայանի հարևանությամբ, իրեն պատկանող ավտոտնակի հարավային հատվածում համայնքապատկան հողամասի վրա, առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, այսինքն՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154–րդ հոդվածի 1–ին մասով:

Քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանը վարչական վարույթի լսումների՝ օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հունիսի 07–ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված լուսանկարներով:

Քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանը վարչական վարույթի ժամանակ հայտնեց, որ ամբողջովին ընդունում է այն փաստը, որ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի, Հովսեփյան փողոցի, 117 հասցեում, իրեն պատկանող ավտոտնակին կից, հարավային հատվածում համայնքապատկան հողամասի վրա, առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, սակայն նշեց, որ ինքնակամ շինարարական աշխատանքները կատարվել են դեռևս 2005 թվականին, ինչպես նաև նշեց, որ պատրաստակամ է երկամսյա ժամկետում իր միջոցների հաշվին վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

Օրենսգրքի 33-հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

Օրենսգրքի 37–րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց

հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Ի նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 37-րդ, 247-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2-րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի բ ենթակետով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել՝ քաղաքացի Արտուշ Սուրենի Համբարձումյանին սույն որոշումը ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Արտուշ Սուրենի Համբարձումյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

26.05.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» «հունիսի» 2023 թվական N 1591 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի հունիսի 22-ին, ժամը 11:15-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանի (Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Կոշտոյան փողոց, 18/4 անձնագիր՝ AP 0671024 տրված՝ 18.01.2017 թվականին 064-ի կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հունիսի 07-ին կազմված՝ քաղաքացի Ղուկաս Հրանտի Դավթյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ Ա. Մովսիսյանը և Ֆ.Հովհաննիսյանը իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի հունիսի 07-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և

255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել են քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանի կողմից Օրենսգրքի 154–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի հունիսի 07–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանի կողմից, Գյումրի քաղաքի, Կոշտոյան փողոցի թիվ 18/4 հասցեում, արևելյան և հյուսիսային հատվածներում համայնքապատկան հողամասի վրա, առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ՝ կառուցվել է պարիսպ այսինքն՝ Ղուկաս Հրանտի Դավթյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154–րդ հոդվածի 1–ին մասով:

Քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանը վարչական վարույթի լսումների՝ օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաչ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքերը ապացուցված են 2023 թվականի հունիսի 07–ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված լուսանկարներով:

Քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանը վարչական վարույթի ժամանակ հայտնեց, որ ամբողջովին ընդունում է այն փաստը, որ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի, Կոշտոյան փողոցի, 18/4 հասցեում, իրեն պատկանող հողամասին կից, արևելյան և հյուսիսային հատվածներում համայնքապատկան հողամասի վրա, առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, սակայն նշեց, որ ինքնակամ շինարարական աշխատանքները կատարվել են դեռևս 2017 թվականին, ինչպես նաև նշեց, որ պատրաստակամ է երկամսյա ժամկետում իր միջոցների հաշվին վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

Օրենսգրքի 33-հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

Օրենսգրքի 37–րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն

հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247–րդ հոդվածի 7–րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Ի նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37–րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1–ին և 2-րդ կետերով, 37-րդ, 247–րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի բ ենթակետով, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:

2. Պարտավորեցնել՝ քաղաքացի Ղուկաս Հրանտի Դավթյանին սույն որոշումը ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

3.Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

5.Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Ղուկաս Հրանտի Դավթյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

26.06.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ
## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» «հունիսի» 2023 թվական N 1590 –Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի հունիսի 22-ին ժամը՝ 12:00 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանի (Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Բելինսկի 1/6, անձնագիր՝ AV 0544122 տրված՝ 01.12.2022 թվականին 064-ի կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի 05.06.2023 թվականի թիվ 68/4-5095 գրությունը (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 08.06.2023 թվականի թիվ 11563 թվագրմամբ) և կից ներկայացված նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի 1-ին վաշտի 4-րդ դասակի կրտսեր պարեկ, ոստիկանության ավագ սերժանտ՝ Հուսիկ Մոխայելի Խաչիբաբյանը և լեյտենանտ՝ Քրիստինե Ստամբոլցյանը ծառայություն իրականացնելիս 2023 թվականի մայիսի 25-ին ժամը 18:30-ի սահմաններում, Գյումրի քաղաքի վարչական տարածքում՝ Բաղրամյան և Թեհլերյան փողոցների խաչմերուկում, կազմել են արձանագրություն այն մասին, որ քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանը, «Ֆորդ» մակնիշի՝ 919 LO 67 պետհամարանիշով ավտոմեքենայից 20-23 պարկ շինարարական աղբ է թափել, այսինքն քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանի

կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 9-րդ կետով:

Քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են՝ ՀՀ Ներքին գործերի նախարարության պարեկային ծառայության, Շիրակի մարզային գումարտակի 1-ին վաշտի 4-րդ դասակի պարեկների կողմից, 2023 թվականի մայիսի 25-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 157 արձանագրության մեջ՝ «իրավախախտում կատարած անձի համառոտ բացատրությունը» մասում կատարվել է գրառում՝ մեջբերում եմ. «հայտարարում եմ, որ նշված վայրում շինարարական աղբ թափելն արգելված է, որի համար տեղյակ չեմ եղել»:

Քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանը հարուցված վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասի պատշաճ ծանուցվել է, գործի նյութերում առկա է փոստային ծառայության միջոցով պատշաճ ծանուցումը ապահոված լինելու վերաբերյալ N AL0109938992AM անդորրագիր:

Քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանը վարչական վարույթի լսումների ժամանակ ընդունեց այն փաստը, որ Գյումրի քաղաքի, Բաղրամյան և Թեհլերյան փողոցների խաչմերուկում թափել է շինարարական աղբ:

Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ մեկից ավելի խորանարդ մետր ծավալով շինարարական աղբ թափելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝համայնքի ղեկավարը կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանի կողմից թույլ է տվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական

վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով՝ 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Նախազգուշացնել՝ քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանին նմանօրինակ դեպքերը բացառելու վերաբերյալ:

3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Մամիկոն Ալբերտի Պապիկյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տաս օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տաս օրվա ընթացքում:

7. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

26.06.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունիսի 2023 **թվականի** N 1589-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԵԿՐԱՍՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 5/2 ՀԱՍՑԵԻ 58.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Նեկրասովի փողոցի N 5/2 հասցեի 58.0 (հիսունութ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Նեկրասովի փողոցի N 5/2 հասցեի 58.0 (հիսունութ) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունիսի 2023 **թվականի** N 1588-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Սերգեյ Սարգսյանի 2023 թվականի հունիսի 05-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունիսի 06-ին 11244 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել Ա/Ձ Սերգեյ Սարգսյանին Գյումրի քաղաքի Պ. Սևակ (Մանկավարժական համալսարանի հարև-մք) հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 6 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հունիսի 12- ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Սերգեյ Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հունիսի 2023 **թվականի** N 1587-Ա

### <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿ, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2023 թվականի հունիսի 01-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունիսի 21-ին 12808 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Վարդանանց հր., Բագրատունյաց հր. հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) ավտոբուսային կանգառներին գովազդային պաստառներ ընդհանուր 17 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հունիսի 01-ից մինչև 2023 թվականի հուլիսի 01-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**